

ՈՐԴԱՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐԶՆԵՐ ԵՒ ՆԱԽԱԳԱՅՆԵՐ
Ս. ՇՆՈՒՆԴԵ ՊԻՏԻ ՏՕՆԵՆ ԲԵԹՂԵՅԵՄԻ ՄԵԶ
ԵՐՈՒՍԱՂԷՄ. 4 (ՌՈՅԹԸՐԶ).- Իբրեւ անա-
լիտիկոս երեւոյթ. Ուղղափառ եկեղեցիներու 14
պատրիարքներ երեկ հաւաքուեցան Երուսա-
ղէմի իրն քաղաքին մէջ. իբրեւ մասնակցութիւն
ձիւղուի Ս. Ծննդեան տօնին. որ տեղի կ'ունե-
նայ 7 Յունուարին:
Վաղը (Հինգշաբթի օր). եկեղեցւոյ պետերը
պիտի հաւաքուին Բեթղեհէմ քաղաքին մէջ. ուր
տեղի պիտի ունենայ Ս. Ծննդեան յատուկ պա-
տարագ: Կը նախատեսուի. որ այս պատարա-
գին ներկայ գտնուին Եասէր Արաֆատ. Ռու-
սիոյ նախկին նախագահ Ելցին. ինչպէս նաեւ՝
Պիեթրոսիոյ. Ռուսմանիոյ. Ուքրանիոյ. Յունաստա-
նի. Մոլդովիոյ եւ Կիպրոսի նախագահները:

ԱԶԳԱԿ

— Ծ Ր Ա Թ Ե Ր Թ —

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **أزتك** جريدة يومية سياسية وأدبية. اليوم السؤة. إيشادرويشيان

1500 L.Ո. 72ԻՐ. ՏԱՐԻ, ԹԻԻ 252 (20415) ԶՈՐԵԲԸԱԲԹԻ, 5 ՅՈՒՆԻՈՒՄ 200010 ԷԶ

Nous vous souhaitons une Bonne et Heureuse
Année 2000, et prions nos clients de retirer les
relevés et les arrêts de leurs comptes au 31
Décembre 1999, ainsi que la correspondance
et les avis qui leur sont destinés, à tous nos
guichets, à partir du 3 Janvier 2000.

بنك اللبناني الفرنسي
BANQUE LIBANO-FRANÇAISE

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԳՈՒՄԱՐԵՅ ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏ ՄԸ

ԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԽԱԽՏՈՒՄԸ ԿԱՐՄԻՐ ԳԻԾ Է

Կառավարութիւնը
երեկ հանրապետու-
թեան նախագահ Վո-
րապար Էմիլ Լահուտի
գլխավորութեամբ գո-
ւարեց արտակարգ ժո-
ղով մը, քննարկելու
համար Պէյրութի եւ
Տընիէի մէջ պատա-
հաժ ապահովական
դէպքերը: Նիստին
ներկայ գտնուեցան
քանակի հրամանա-
տար Վոր. Միշել Ալէյ-
ման, քանակի գաղտնի
սպասարկութեան պետ
Կոր. Ռեմոն Ալար եւ
քանակի սպայակոյտի
գործողութեանց հար-
ցերու փոխարտորդ Վոր.
Իսմաէլ Սթուէ:



Նախագահ Լահուտ կը գլխավորէ կառավարութեան
արտակարգ նիստը:

Անուար խալիլյայտարա-
րեց որ «նիստը յատ-
կանշուեցաւ երկրին
մէջ տիրող ապահովա-
կան վիճակին քննար-
կումով: Փոխ վարչա-
պետ, ներքին գործոց

նախարար Միշել Մըլլ
ժողովին ներկայացուց
Մար Էլիաս շրջանին
մէջ ռուսական դեսպա-
նատան դէմ վիճակ
յարձակումին մանրա-
մասնութիւնները՝
ընդգծելով, որ ապահո-
վութեան ուժերը փու-
ջադէպին վերա-
հաստատելու քնակա-
նուն վիճակը»:

Նախարարը շարու-
նակեց. «Այս քանակի
հրամանատարը նա-
խարարաց խորհուր-
դին վեկուցեց Տընիէի

ՔՐԻՆԹՐՆ ՈՐՈՇԵՅ ԱՆՉԱՄԸ ՄԱՐՆԱԿՅԻԼ
ՔԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

ՍՈՒՐԻԱ - ԻՍՐԱՅԷԼ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ԴԻՄԱԳՐԱՒԵՆ ՈՐՈՇ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Նախագահ Զիւնթըն հարց մը կը քննարկէ Պարաքի
հետ, մինչ Ծարէի մտիկ կ'ընէ:

Սուրիոյ եւ Իսրայէլի միջեւ Երկուշաբթի օր սկսած
բանակցութիւնները շարունակուեցան երէկ Միացեալ
Նահանգներու մէջ, ուր նախագահ Պիլ Բիլլինթըն կը փոր-
ձէ եռակողմանի հանդիպում մը կապացնել Իսրայէլի
վարչապետ Էհուտ Պարաքի եւ Սուրիոյ արտաքին գոր-
ծոց նախարար Ֆարուք Շարէհի հետ:

Սուրիական եւ Իսրայէլեան պատուիրակութիւնները
երէկ բանակցութիւններու սեղան վերադարձան: Դարե-
փակ եւ լուսարձակներէ հեռու կապացող նիստերուն եւ
անոնց ընթացքին արժարժուած նիւթերուն մասին որե-
ւէ յայտարարութիւններ չեն կատարուիր: Բանակցու-
թիւնները հովանաւորող Միացեալ Նահանգներ անելի
յարմար նկատած են լրատուական միջոցներէն հեռու
պահել նիստերը, որպէսզի սխալ մեկնաբանութիւններ

Շար. ք. էջ 10

Շար. ք. էջ 10

ՏՐՆԵՆԻԷԻ ՄԷՋ

ԲԱՆԱԿԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՀԵՏԱՊՆԴԵԼ ԽՈՅՍ ՏՈՒԱԾ ԶԻՆԵԱԼՆԵՐԸ

Լիբանանեան բանակը երեկ յաջորդաբար հին-
գերորդ օրն ըլլալով շարունակեց Տընիէի մէջ հե-
տապնդել փոքր խմբակներու բաժնուած փախուս-
կան զինեալները:

«Ա. Է. Փ. Բ.» լրատու գործակալութիւնը լիբա-
նանեան բանակի տեղեկատուական բաժնումուն-
քէն քաղելով իր տեղեկութիւնները հաղորդեց, որ
150էն 300 միջեւ նաշուող զինեալ խմբակէն մնա-
ցած են միայն քանի մը տասնեակ հոգի. որոնք
Ք. ֆարինըյոյէն փախուստ տալով ապաստանած են
շրջանի ագիներուն ու լեռներուն մէջ:

Հստ գործակալութեան. Ուրբաթ օրէն առդին.
բախումներուն գոն գացած են շուրջ 30 հոգի. որոնց
շարքին են զինուորներ. զինեալներ եւ քաղաքա-
լիներ:

Բանակային աղբիւրը գործակալութեան ըսաւ.
որ երեկ զինուորական յատկանշական գործողու-
թիւններ չեն կատարուած. որովհետեւ զինեալ ար-
մատակներու զինուորական կառույցը քանդուած
է եւ կը շարունակուի անոր մնացորդներուն հե-
տապնդումը:

Մանրամասնութեանց համար դիմել՝
հեռ. (01)250999 - (8 զին)
Ֆաքս : (01) 250888
Տոյա, Մանքըր Տունեան, Չոյ յարկ

ՓՈՒԹԻՆ Կ՝ՈՒԶԷ ԿՐՈՉՆԻԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԱՒԱՐՏԵԼ ՆՈՒԱԶԱԳՈՅՆ ԶՈՀԵՐՈՎ

ՄՈՍԿՈՒԱ. 4 (ՌՈՅ-
ԹԸՐԶ).- Հակառակ ու-
սական ուժերու կողմէ
սաստիկ ուժակոծու-
մէրու, իսլամական ըմ-

բոստ վիճակներ
Երեքշաբթի օր յայտնե-
ցին. թէ կը շարունակեն
հակակշիռ պահել մայ-
րաքաղաք Կրոպնիի եւ

հարաւային լեռներուն
վրայ:

«Իթար-Թասս» լրա-
տու գործակալութիւնը
հաղորդեց, որ ռուսա-
կան ուժերը Երկուշաբ-
թի օր փորձած են ըմ-
բոստ վիճակները հե-
ռացնել Կրոպնիի կեդ-
րոնին մօտակայ երկա-
թուղիի կայանին շրջա-
կայ վայրէն եւ իրաւա-
լային ու օդանաւային
յարձակումներու ձեռ-
նարկած են լեռնային
կեդրոններու վրայ:

Սակայն ըմբոստ
բանքեր Մովլատի Ու-
տուկով յայտնեց, որ
Կրոպնիի տակաւին ըմ-
բոստներու հակակշի-
ռին ենթակայ կը մնայ,
քացի Սթարուփրոմիս-
լովսի թաղամասէն եւ
թէ Երեքշաբթի առաւ-
տուն քաղաքին դէմ ըմ-
բակոծումները թերեւ-
ցած են:

Ռուսական լրատու
գործակալութիւններ
հաղորդեցին, որ բա-
նակը եւ օդուժը Երկու-
շաբթի գիշեր ըմբոստ
բանի մը թիրախներ
քանդած են: Ռուսա-
կան ուժերու մամլոյ
կեդրոնի փոխ պատա-
սխանատու Վալենթին
Արսաֆիւ Երկուշաբ

Շար. ք. էջ 10

ՓՈՒԹԻՆ ՀԵՌԱԶԱՅՆԱՅԻՆ
ԽՕՍԱԿՅՈՒԹԻՒՆ ՄԸ ՈՒՆԵՅԱԻ ԱԼԻԵԻԻ ՀԵՏ

ՌՈՒՍԻՈՅ, ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԱԶԳՂԵՅՃԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐՈՒՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ ԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԱՐԿ

Ռուսիոյ նախագահի պաշտօնակատար Վլատի-
միր Փութին Երկուշաբթի օր հեռաձայնալին իս-
սակցութիւն ունեցաւ Ազրպէյճանի նախագահ Հայ-
տար Ալիեւի հետ:

Փութինի մամլոյ ծառայութեան պետ Ալեքսի
Կրոմով յայտնեց, որ իսսակցութեան ընթացքին
նախագահները համաձայնած են, որ շրջանային
կայունութեան եւ գործակցութեան առաջադրան-
քով, մօտիկ ապագային գումարուի ժողով մը,
Ռուսիոյ, Ազրպէյճանի, Հայաստանի եւ Վրաստա-
նի նախագահներուն մասնակցութեամբ:

Ալիեւի մամլոյ ծառայութեան համաձայն. իս-
սակցութեան ընթացքին քննարկուած են Անկախ
Պետութիւններու Հասարակապետութեան անդամ
Երկրներուն նախագահներուն Մոսկուայի մէջ կա-
յանալիք վեհաժողովին. ինչպէս նաեւ՝ Լեռնային
Ղարաբաղի տագնապին լուծման գծով հայ-ազըր-
պէյճանական հակամարտութեան առնչուող հար-
ցեր: Անոնք նշած են, որ առաւել նիգ անհրաժեշտ է
հարցին իրադր լուծման համար:

(ԻԹԱՐ - ԹԱՍՍ)

ԱՅՍՐՅՈՐԴԱՆԱՆԻ 5 ԱՌ ՀԱՐԻԻՐԸ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐՈՒՆ ՊԻՏԻ ՅԱՆՁՆՈՒԻ ՅԱՌԱՋԻԿԱՅ 48 ԺԱՄԵՐՈՒՆ



Էրան եւ Ուրէյքաթ ստորագրեցին 5 առ հարիւրի
համաձայնութիւնը:

ԵՐՈՒՍԱՂԷՄ. 4 (ՌՈՅԹԸՐԶ).- Իսրայէլ Երեքշաբթի
օր (երէկ) յաջողեցաւ յաղթահարել այն խոչընդոտները,
որոնք կ'ուշացնէին Այսր յորդանանի մէջ յաւելեալ հոգի
գիշեր մը պաղեստինցիներուն:

Երուսաղէմի մէջ բանակցութիւններ կատարող իս-
րայէլեան եւ պաղեստինեան պատուիրակութիւնները,
որոնք շարաքներէ ի վեր չ'են կրցած համաձայնութիւն
մը գոյացնել պաղեստինեան իշխանութեան յանձնուե-
լիք հինգ առ հարիւրի տարածութեան մասին, Երեքշաբ-
թի օր յայտարարեցին, որ համաձայնութիւնը գոյացած

Շար. ք. էջ 10

ԶԱԶԻՆՕ

ՖԱՌԻԱՐ ԱՆԹԻԼԻԱՍ

ԿԸՆԴՈՒՆԻ ԶԵԶ ԱՄԵՆ ԿԵՍՕՐ ԵՒ
ԻՐԻԿՈՒՆ ԻՐ ԶԵԶ ՍՐԱՀՆԵՐՈՒՆ ՄԵԶ:

- Արեւելեան եւ արեւմտեան համադամ ձաշեր:
- Ճոխ աղանդեր:
- Մանուկներու յատուկ խաղաղալոյ:
- Անճնական կամ միութեանական ձեռնարկներու համար յատուկ սակ:

Հեռ. 04 - 415500 / 1 / 2:

ՃԱՇԱՐԱՆ

Մանրամասնութեանց համար դիմել՝
հեռ. (01)250999 - (8 զին)
Ֆաքս : (01) 250888
Տոյա, Մանքըր Տունեան, Չոյ յարկ

ՖՈՒԼ, ՀՈՍՄՈՍ, ՖԱԹԹԷ, ՀԱՌԻՄԱ, ԱՊՈՒԽՏ, ԵՐԾԻԿ (ՆԱԵՒ ԵՐԾԻԿ ՌԵԺԻՄԻ ՀԱՄԱՐ) ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ ԿԱՃԱՌԸ

- Համեղ սաւորութիւններու տեսակներ, ընտիր եւ համադամ աղանդերներ:
- Ըստ ապսպրանքի կը պատրաստենք սու-պօրթկ եւ եռանկիւն լիցք:
- Արագ սպասարկութիւն մինչեւ բնակարաններ եւ գրասենեակներ:

ՀԱՍՅԷ.- ՕԹՈՍԹՐԱՏ ԶԱԼՔԱ, ՀԵՌ. 01 - 900933

ԶԻՆԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԻՍՐԱՅԵԼ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ

ԵՐՈՒՍԱԶԷՄ, 4 (ՌՈՑԹԸՐԶ)։- Զինաստանի նախագահ Ջիանկի Մեմին գարնան Իսրայել պիտի այցելի։ Իսրայելացի պաշտոնատարներ յայտնեցին, որ Ջիանկի պիտի ըլլայ Իսրայելի այցելող չին առաջին ղեկավարը։ Արտաքին գործոց փոխ նախարար Նաուաֆ Մասալ-հա ըսաւ, որ չին նախագահը Իսրայել պիտի այցելի ամրապնդելու համար այսպէս մարգերու մէջ երկկողմանի կապերն ու գործակցութիւնը։ Փեքինի կողմէ որեւէ մեկնարանութիւն չկատարուեցաւ Ջիանկի Իսրայել այցելութեան լուրին մասին։ Զինաստան եւ Իսրայելի դիւանագիտական կապեր հաստատեցին 1992ին։ Ջիանկի տեսակցութիւն պիտի ունենայ վարչապետ Էհուտ Պարաքի, ինչպէս նաեւ՝ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթին։ Ջիանկի պիտի ըլլայ նաեւ պաղեստինեան չորսնեան այցելող չին առաջին ղեկավարը։

ՆՈՒԲԵՐՆԵՐ ՍՏԱՅԱՍԾ ԸԼԼԱԼՈՒ ՀԱՐՅՈՎ

ԻՍՐԱՅԵԼԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՊԱՏՐԱՍՏ ԶԷ ՀՐԱԺԱՐԵԼՈՒ

ԵՐՈՒՍԱԶԷՄ, 4 (ՌՈՑԹԸՐԶ)։- Իսրայելի նախագահ էգէր Ուալզման Երեքարթի օր յայտարարեց, որ պատրաստ է հրաժարելու այն ամբաստանութիւններուն պատճառով, ըստ որոնց մեծ նուէրներ ստացած է ֆրանսացի հրեայ միլիոնատէրէ մը։ Ուալզման ըսաւ, որ դժուար հանգրուանէ մը կ'անցնի։ Ան աւելցուց, որ կը սպասէ դատախազին որոշումին, որմէ ետք իր որոշումը պիտի տայ, ներկայիս, սակայն պատրաստ է հրաժարելու։ Իսրայելի նախագահը երկու օրէ ի վեր թիրախ դարձած էր ամբաստանութիւններու, որոնց պատճառով Իսրայելեան օրաթերթեր պահանջեցին Ուալզմանի հրաժարականը։ «Ճերուզալէմ Փոսթ» Երեքարթի օր պահանջեց, որ Ուալզման չամբողջացնէ հնգամեայ իր երկրորդ նստաշրջանը եւ անմիջապէս հրաժարի։

Հրապարակուած լուրերուն համաձայն, Իսրայելի ընդհանուր դատախազը Երկուշաբթի օր քննութեան սկսաւ տուգանելու համար Ուալզմանի դէմ կատարուած ամբաստանութիւնները։ Ամբաստանութիւնները կ'ըսեն, որ Ուալզման աւելի քան 450 հազար տոլար նուէր ստացած է Էտուար Մարուսին 1988 - 1993 թիւերէ։ Այդ օրերուն Ուալզման խորհրդարանի անդամ ու նախարար էր։ Ուալզմանի գրասենեակը յայտարարեց, որ նուիրատուութիւններ օրէնքի ծիրէ ներս կատարուած էին։ Ուալզմանի բանբերը Երկուշաբթի օր ըսած էր, որ Իսրայելի օրէնքը կ'արտօնէ պաշտօնատարներու բարեկամներէ նուէրներ ստանալ։ «Հաաբեց», սակայն կը գրէր, որ երբ պետական բարձրաստիճան պաշտօններու կ'առնչուի հարցը, դժուար է գտնել տարբերութիւնը անձնական նուէրներուն եւ կաշառակերութեան հեռանկարով տրուած գումարներուն։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՅԻՈՅ

Ուրախութեամբ կը յայտնենք մեր հաւատացեալ ժողովուրդին, որ յառաջիկայ Կիրակի, 16 Յունուար 2000ին. Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ ուխտի տօնակատարութեան օրն է։

Այս առիթով, Սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցուի եւ մատաղօրինէք պիտի կատարուի։

Պիտի պատարագէ եւ պիտի քարոյէ՝

ԳԵՂԱՄ Ծ. ՎՐԴ. ԽԱԶԵՐԵԱՆ

(Բարեջան առաջնորդ Լիբանանի հայոց թեմի)

Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ մեր ժողովուրդը, իր ուխտը կատարելու. Ս. Կարապետի հոգիով ներշնչուելու եւ վերանորոգելու իր Ս. հաւատքը։

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՅԻՈՅ

LEBANON 2000

«INTERNATIONAL ARMENIAN NIGHT»

Հովանաւորութեամբ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան, նոր 1000ամեակին առիթով, Lebanon 2000 տօնակատարութեան ելոյթներու շարքէն ներս հայ համայնքը իր մասնակցութիւնը կը բերէ հետեւեալ ելոյթներով, տօնակատարութեան ծրագրի Յունուար 6ի երեկոյեան (International Armenian Night) քաժնէն ներս՝

1.- Փիեռ Շամմասեան, իր թատերախումբով - երգիծանք - թատրոն։

2.- Հայ Սեւ Գօտիներու Միջազգային Ակադեմիա - Մարտարուեստի, մարպանքներու եւ հոգեմտաւոր ուժի ցուցադրութիւն։

3.- Առաջին իշխանեան եւ իր նուագախումբը - Jazz համերգ։

4.- Համազգայինի «Քնար» պարախումբ, ղեկավարութեամբ պարուսոյց՝ արմ. Յելիք Յարութիւնեանի։

Յայտագիր՝ հայկական, արաբական եւ արեւմտեան պարեր։

5.- Կի Մանուկեան իր նուագախումբով եւ «Հորովել» երգչախումբով - ժամանակակից, հայկական եւ հարաւ ամերիկեան երաժշտութիւն, մինչեւ առաւօտեան փոքրիկ ժամերը։

Կոչ կ'ուղղենք բոլոր հայերուն իրենց ներկայութեամբ քաջալերելու այս իւրայատուկ եւ եզակի ձեռնարկը։

● Տոմսերը կը վաճառուին TRADING PLACES եւ ABBA ակադեմիա (Master Mall)։

ՏԱՆՕԹ.- 30% զեղչ բոլոր հայերուց։

ԹԻՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՌԱՋԻԿԱՅ ԶԱԲԱԹ ՊԻՏԻ ԸՆՆԱՐԿԷ ՕՃԱԼԱՆԻ ՄԱՇԱՊԱՏԻԺՆ ԸԱՐՅԸ

ԱՆԳԱՐԱ, 4 (ՌՈՑԹԸՐԶ)։- Թուրքիոյ վարչապետ Պիլիէթ Էճեհիտ Երեքարթի օր յայտնեց, թէ իր կառավարութիւնը յառաջիկայ շաբաթ պիտի քննարկէ քիւրտ ըմբուսողեկավար Ապտիլլա Օճալանի դէմ արձակուած մահաւճիռին հարցը։

Յունուար 12ին կալանաւոր քննարկումը փորձարկուի մը պիտի ըլլայ Էճեհիտի եռակողմանի կառավարական ընկերակցութեան ուժին։

Չ ա ի ա կ ո ղ մ ե ա ն Էճեհիտ, որ անձնապէս կ'ընդդիմանայ մահապատիժին, ընկերակցութեան ծախսերը աջակողմեան անդամներու ընդդիմութիւնը կը դիմագրաւէ ինչ կը վերաբերի իր ծրագրին, որ կ'առաջադրէ սպասել հարցին գծով Մարդկային Իրաւաց Եւրոպական Ատեանի որոշումին՝ նախքան պայմանաւորաբար մէջ արձարծելը։

Ընկերակցութեան

երկրորդ մեծագոյն կուսակցութիւնը՝ Տեւլէթ Պահչէլիի Ազգայնական Գործի Կուսակցութիւնը, աւանդականօրէն ծախսերը կեցնած կը ցուցաբերէ քրտական անջատողականութեան հարցին հանդէպ եւ անոր պօրակիցներէն շատերը կը պահանջեն, որ Օճալան կարելի եղածին չափ շուտ կախուի։

Օճալան Յունիսի դաւաճանութեան յանցանքով մահուան դատապարտուած էր։ Երկրին ընդհանուր դատախազը անցեալ շաբաթ որոշած էր ի պօրով պահել մահաւճիռը՝ մերժելով պայմերատեւութեան եւթարկել։

ԾԵՄԻ ԾՈՒՐԶ
ՔՆՆՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ՄԵՐԺՈՒԹԻՒՆ
ԱՏԵՎԵՆԻՆ ԿՈՂՄԷ

Միւս կողմէ, թրքական թերթեր Երեքարթի օր հաղորդեցին, թէ դատախազներ քննութիւն քացած են արտաքին գործոց նախարար

Իսմայիլ Ճէմի շուրջ՝ անջատողականութեան յանցանքով, որովհետեւ ան առաջարկած է ջնջել քրտերէն պատկերապիտումներու դէմ հաստատուած արգելքը։

Ճէմ փոփոխութիւնը առաջարկած է Դեւլետմէրիւն, Ե. Միւլետմէրիւն կողմէ Անգարայի անդամակցութեան թեկնածութեան հանգամանք տալէ ետք։

Ազգայնական Գործի Կուսակցութիւնը սակայն անմիջապէս մերժած էր Ճէմի քայլը՝ յայտնելով, որ Թուրքիա մէկ պետութիւն է։

Աւելի ուշ հրատարակուած տեղեկութիւններ յայտնեցին, թէ թուրք դատախազներ որոշած են, թէ որեւէ հիմնաւորում չկայ Ճէմի շուրջ յիշեալ յանցանքով քննութիւն բանալու, որ տեղի պիտի ունենար պարզ քաղաքացիի մը գանգաւորի համաձայն։ Ան ըսած է, թէ նախարարին առաջարկը սահմանադրութիւնը կը բռնաբարէ։

ՌՈՒՍԻՈՅ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԿԱՆԽԱՀԱՍ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԹՈՒԱԿԱՆԸ ՊԻՏԻ ՈՐՈՇՈՒՅ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՈՒՐԲԱԹ ՕՐ

ՄՈՍԿՈՒՄ, 4 (ՌՈՑԹԸՐԶ)։- Ռուսիոյ Դաշնակցային Խորհուրդը Զորեքարթի օր (այսօր) յատուկ նիստ մը պիտի գումարէ նախագահական կանխահաս ընտրութիւններու թուականը ճշդելու հարցը, յայտնեց խորհուրդին մամուլի պրասենեակը Երեքարթի օր։

Կ'ենթադրուի, թէ նախագահի պաշտօնակատար եւ վարչապետ Վլատիմիր Փութին յաղթական դուրս պիտի գայ ընտրութիւններէն, որոնց կայացման ժամանակը իր յաղթանակի հաւանականութեան համար կենսական է։

Նախկին նախագահ Պորիս Զլյին Դեկտեմբերի 31ին հրաժարած էր ծառայի պաշտօնի վրայ մնալէ ետք, սակայն իր երկրորդ նստաշրջանի աւարտէն Յամիս առաջ։

Փութին ռուսական ՕՍՍՐ. թի » պատկերասփիւնի կայանին ըսած է, որ ելցին տիւրը էր երբ հրաժարելէ ետք Կրեմլինէն հեռացած է։

Յետխորհրդային սահմանադրութեան համաձայն, քուէարկութիւնը պէտք է տեղի ունենայ նախորդ նախագահին հրաժարումէն երեքամիս ետք։

Անցեալ տարի, նախագահական ընտրութեանց գծով խորհրդարանին կողմէ վաւերացուած օրէնք մը տակաւին չէ հրատարակուած, որպէսզի ի գօրուէր, սակայն մասնագէտներ կ'ըսեն, թէ անոր պարունակութիւնը կը նշանակէ, որ ընտրութիւնները Մարտ 28ին պէտք է տեղի ունենան։

Նախագահական ընտրութիւններուն հաւանական ալ թեկնածուներ են համայնապար ղեկավար Կենատի Զիւլկաւով, ազատական Կրիկորի Եւալինաքի, նախկին վարչապետ Եւգենի Քրիմաքով եւ ծայրայեղ ազգայնական Վլատիմիր Ժիրինկովսի։

Միւս կողմէ, Փութին Երեքարթի օր երկու դիւանագէտներ նշանակեց Կրեմլինի վարչակազմին մէջ՝ բանալի դիրքերու վրայ։

Կրեմլինի մամուլ սպասարկութիւնը յայտնեց, որ



Փութին Կրեմլինի մէջ

իր նախկին պատասխանատուը՝ Ալեքսէյ Կրոմով, նշանակուած է Փութինի մամուլի քարտուղար, որ իրեն պաշտօն աւելի կշիռ ունի քան մամուլ սպասարկութեան պատասխանատուը։

Վլատիմիր Ռախմանին նշանակուած է Կրեմլինի փոթոթոյի պետ, որ նոյնպէս ազդեցիկ ու նախագահին սերտ պաշտօն մըն է։ Ան նախապէս արտաքին գործոց նախարարութեան գլխաւոր բանբերն էր։

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ՝ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Տեսնու Մերոյ Յիսուսի Քրիստոսի Ս. Ծննդեան տօնին առիթով, Հինգշաբթի, 6 Յունուար 2000ին, Լիբանանի թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ հանդիսարար Սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցուի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբան հայրերու կողմէ։

Ստորեւ պատարագիչ միաբան հայրերու ցանկը.-

- Ս. Նշան Մայր եկեղեցի՝ Ս. ԳԵՂԱՄ Ծ. ՎՐԴ. ԽԱԶԵՐԵԱՆ (Առաջնորդ Լիբանանի հայոց թեմի)
- Ս. Քառասնից Մանկանց եկեղեցի՝ Ս. ԵԲՐԵՄ ԱՐԲ. ԹԱՊԱԳԵԱՆ
- Ս. Աստուածածին եկեղեցի՝ Ս. ԶԱՐԵԶ ԱՐԲ. ԱԶՆԱԿՈՐԵԱՆ
- Ս. Սարգիս եկեղեցի՝ Ս. ՏԻՐԱՅՐ ԵՊՍ. ՓԱՆՈՍԵԱՆ
- Ս. Յակոբ եկեղեցի՝ Ս. ՆԱՐԵԿ Ծ. ՎՐԴ. ԱԼԵԿՍԷԶԵԱՆ
- Ս. Յարութիւն եկեղեցի (Ժուրիէ)՝ Ս. ՇԱՀԱՆ Ծ. ՎՐԴ. ՍԱՐԳԻՍԵԱՆ
- Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցի՝ Ս. ՓԱՌԷՆ ՎՐԴ. ՎԱՐԴԱՆԵԱՆ
- Ս. Յարութիւն եկեղեցի (Ռեմէյլ)՝ Ս. ՄԱՇՏՈՑ ԱՐԵՂ. ԶՍՊԱՆԵԱՆ

Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի կաւակներուն՝ ներկայ գտնուելու Սուրբ եւ անմահ պատարագին, հաղորդուելու Ս. Ծննդեան խորհուրդով, լսելու օրումն պատգամը եւ վայելելու Հայց. Եկեղեցւոյ արարողութեանց հայաբոյր ծեսը։

ԴԻՒՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՊԱՏԱՍԻՒՄԷՐ

ՇՈՒՐԶ ՀԱՐԻՐ ԻՏԱԼԱՅԻ ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ ԿԸ ՊԱՅԱՆՁԵՆ ԻՐԱՔԻ ԴԵՍ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ՊԱՏԺԱՍԻՋՈՑՆԵՐՈՒ ՋՆՋՈՒՄԸ

ՊԱՏԱՍ, 4 (ՌՈՑԹԸՐԶ)։- Մատաւորապէս հարիւր յաւաքի ցուցարարներ Երեքարթի օր ընդգրկեցին մը կազմակերպեցին Պաղատաի մէջ ամբիկեան նախկին ղեկավարատան դիմաց՝ պահանջելով, որ Իրաքի դէմ հաստատուած ՄԱԿի պատժամիջոցները ջնջուին։

Ցուցարարները, որոնք մաս կը կազմեն «Պաղատաի համար կամուրջ» շարժումին, կոչ ուղղեցին Միացեալ Նահանգներուն եւ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի անդամ ալ երկիրներուն, որ վերջինն ուժ տարիէ ի վեր հաստատուած պատժամիջոցները։ «Ամուրալկոն ցեղասպանութիւն է» կը բացագանչէին ցուցարարները, որոնք նամակ մը յանձնեցին այն դիւանագէտին, որ ամբիկեան շահերը կը ներկայացնէ Իրաքի մէջ։

Միւս կողմէ, Իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյն կոչ ուղղեց Ռուսիոյ նախագահի պաշտօնակատար Վլատիմիր Փութինի հաստատ պահելու Պաղատա - Մոսկու յաւ կապերը, հաղորդեց ԻՆԱ լրատու գործակալութիւնը։ Սատտամ նամակ մը ուղարկած է Փութինի՝ ընդգծելով երկու երկիրներուն միջեւ գոյութիւն ունեցող աւանդական կապերը, ինչպէս նաեւ պահանջելով թափ տալ այսպէս մարգերու մէջ գործակցութեան։

ՌՈՒԱԹՈՒՑ ԵՐԵՍՓՈԹԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԱՇ. ՏԷ. ԶԷՏ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԸ ԿՐԻ

ՁԱՂԸՊ, 4 (ՌՈՑԹԸՐԶ)։- Խրուաթիոյ կեդրոնի ծախք ընդդիմադրութիւնը Երկուշաբթի օր երեսփոխանական ընտրութեանց մեծ յաղթանակ մը ապահոված է՝ նախկին նախագահ Ֆրանիօ Թուճմանի (որ քանի մը շաբաթ առաջ մահացած էր) ազգայնական ԱՇ. ՏԷ. ԶԷՏ. Կուսակցութիւնը պարտութեան մատնելով եւ թափ տալով այն յոյսերուն, թէ ժողովրդավարութիւնը յառաջխաղաց պիտի արձանագրէ երկիրը Արեւմուտքին աւելի մօտեցնելով։ Երեքշաբթի առաւօտուն քուէներու 84 առ հարիւրը համրուած էր եւ ընդդիմադիր գլխաւոր պարբ. գլխաւորութեամբ ընկերվար ժողովրդավարներու եւ ընկերվար ապաւաններու. յատկապէս առաջնահերթ դիրքի վրայ էր։ Արեւմուտքի բարձրաստիճան դիւանագետ մը յայտնած է, թէ փոփոխութիւնը անհրաժեշտ է եւ ժողովրդավարութեան առանցքը կը կապէ։

Կեդրոնի ծախք ընդդիմադրութիւնը պարտացուց, թէ մասնակ անհրաժեշտ պիտի ըլլայ երկիրը իր դժուարին վիճակին դուրս բերելու համար։

ՊԵՆԱՐԱՄԵՆՆԵՆ ՍԱՆՆ. ՀԱՎԱԴԱՐՉՈՒԹԻՒՆ

Եուկոսայիտի կառավարութիւնը սառնօրէն հակադարձեց Երեքշաբթի օր խրուաթիոյ ընտրութեանց արդիւնքներուն. որոնք վերջ տուած էին ազգայնական ԱՇ. ՏԷ. ԶԷՏ.ի մօտաւորապէս տասնամեակի մը իշխանութեան։

Դաշնակցային Եուկոսայիտի տեղեկատուութեան նախարար Կորսն Մաթիչ ըսաւ. «Նախատեսելի պարտութիւն մըն էր»։

ԱՍՏՈՒԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ՓՐԿԻՉ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Ուրախութեամբ կը հրաւիրէ իր հաւատացեալները մասնակցելու Ս. պատարագի, կոր պիտի մատուցանէ

ԱՄԵՆ. ԵՒ ԳԵՐԶ. Տ. Տ. ՆԵՐՍԷՍ-ՊԵՏՐՈՍ ԺԹ.

Կաթողիկոս -Պատրիարք Կաթողիկէ Հայոց Տանն Կիլիկիոյ

Հինգշաբթի, 6 Յունուար 2000, առաւօտեան ժամը 9:30ին,

Պուրճ Համուտի Ս. Փրկիչ եկեղեցի։

Յետ Ս. պատարագի եւ Մկրտութեան արարողութեան՝ Աշխատբոյր, շնորհաւորութիւններ եւ հիւրասիրութիւն Հ. Կ. Մ. ակումբի անդին մէջ։

NUTRITION
MICRONUTRITION

CeMA

ՏՈՔԹ. Կ. ՓԱՇԱՊԵՋԵԱՆ

Diplôme de diététique et de nutrition
Clinique et Thérapeutique de l'université
Paris VII - Faculté Bichat

Membre de l'Association Européenne
de Médecine Esthétique et de Diététique

Membre de l'Institut Européenne
de Diététique et de Micronutrition

Առաջին կեդրոնը

ԳՈՐԾԱՐԱՐ ԽԱԻԸ ԵՐԿՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹԵԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԷՆ ՄԷԿՆ Է

Կ'ԸՍԷ ՆԱԽԱԳԱՏ
ՌՈՂԵՐԹ ՔՈԶԱՐԵԱՆ

29 Դեկտեմբերին Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան հանդիպում մը ունեցաւ երկրի գործարարներուն հետ եւ չեղտեց գործարար խաւի կարեւորութիւնը երկրի կայունութեան համար:

Նախագահը որեւէ պետութեան կայունութեան երաշխիքներէն մէկը համարելով ամուր գործարար խաւը աւելցուց, թէ գործարարութեան նկատմամբ համապատասխան վերաբերումի եւ փոխադարձ վստահութեան պայմաններուն մէջ միայն կարելի է աշխուժացնել գործարար կեանքը եւ նպաստել երկրի բարեկեցութեան: «Կառավարութիւնը պարտաւոր է հաշուի նստիլ մեծ հարկատուներու հետ», ըսաւ նախագահը:

Հանդիպման ներկայ գտնուեցան վարչապետ Արամ Սարգսեան, տնտեսութեան նախարար Լեւոն Բարխուդարեան, արդիւնաբերութեան եւ առեւտուրի նախարար Կարէն Ճշմարտեան եւ Կեդրոնական Դրամատան նախագահ Տիգրան Սարգսեան:

Խոսելով ընթացիկ տարուան իրադարձութիւններուն ու տարուած աշխատանքներուն մասին՝ նախագահը երկրի տնտեսական ընագաւառը «բաւական ծանր» գնահատեց: Ըստ նախագահին, Ռուսիոյ տնտեսական տագնապը, խորհրդարանական եւ տեղական ինքնակառավարման մարմիններուն ընտրութիւնները եւ մանաւանդ 27 Հոկտեմբերի ողորդութիւնը լուրջ հետքեր ձգեցին երկրի տնտեսական կեանքին վրայ:

Այսուհանդերձ սակայն, նախագահը իր գոհունակութիւնը յայտնեց յատկապէս արդիւնաբերութեան մարզին ներս արձանագրուած աճին նկատմամբ, որ արդիւնքն էր մեծ թիւով ձեռնարկութիւններու վերագործարկման:

Անդրադառնալով որոշ ծախողութիւններու՝ Քոչարեան ցաւ յայտնեց, որ կարելի չեղաւ աշխուժացնել ներդրումային քաղաքականութիւնը, ինչպէս նաեւ կարելի չեղաւ լուծել հարկային վարչութեան առնչուող որոշ հարցեր: Սակայն այս խրոդութեան դիմաց, ան չեղտեց դատական - իրաւական համակարգէն ներս կատարուած բարեփոխումները, որոնք երկրի առեւտուրի պաշտպանութեան լուրջ երաշխիքներ են:

Ռոսք առաւ նաեւ Արդիւնաբերողներու եւ Գործարարներու Միութեան նախագահ Արամ Վարդանեան, որ ընդգծեց, թէ գործարարները յատուկ ակնկալութիւններ ունին իշխանութիւններէն, որոնց հիմնականը՝ երկրէն ներս կայունութեան ապահովումն է: Ապա, ան նախագահին յանձնեց միութեան յուշանուէրը:

Նախագահը վստահեցուց, որ ներկայացուած բոլոր հարցերը հանգամանօրէն պիտի ուսումնասիրուին եւ ապա, կոչ րրաւ գործարարներուն աշխուժացնել եւ ընդլայնել իրենց գործունէութեան ծիրը՝ միաժամանակ պատրաստականութիւն յայտնելով աջակցիլ ներդրումային որեւէ ծրագրի:

ՓՈՔՐԱՍԱՄՆՈՒԹԵԱՆՑ

ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

ՊԱՇՏՊԱՆՈՒԱԾ ԵՆ ԻՐԱՆԻ ՄԷՋ

27 Դեկտեմբերին Իրանի հիւսիսը գտնուող Կիլամ Գահանգի Ռաշտ քաղաքի Յայկական խորհուրդի անդամ Արտուր Յովհաննիսեան յայտարարեց, թէ Իրանի մէջ ազգային փոքրամասնութեանց իրաւունքները պաշտպանւած են միւս բոլոր քաղաքացիներուն նման: Ան աւելցուց, որ Իրանի մէջ մարդկային իրաւանց ոտնակոխման մասին ամերիկեան ամբաստանութիւնները անհիմն են: Յովհաննիսեան յայտնեց, թէ Իրանի հայերը նկատուած են սովորական իրանցի քաղաքացիներ եւ կը վայելեն իրենց ընկերային ու ազգային իրաւունքները: Յայկական խորհուրդի անդամին համաձայն, հայերը իրենք զիրենք օտար չեն զգար այդտեղ. անոնք երկրին մէջ կ'ապրին ազատօրէն:

Յովհաննիսեան նշեց, որ Կիլամի ցահանգը ունի 2000 հայ բնակիչ՝ չորս մեծ եկեղեցիներով:

ԿԼԵՏԵՅԸ

Ր. ԵՒ Ճ. ՄԱՆՈՒԿԵԱՆ 50,000 ՏՈՒԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Հայ Մշակութային Հիմնարկութիւնը այս շաբաթ յայտարարեց, թէ Բաֆֆի եւ Ճոան Մանուկեան ամուր 50,000 տոյրա նուիրած է կազմակերպութեան:

Հայ Մշակութային Հիմնարկութեան բանբերը յայտնեց, թէ «Հայ Մշակութային Հիմնարկութիւնը մեծապէս կը գնահատի սրտագին եւ առատաձեռն նուիրատուութիւնը Բաֆֆի եւ Ճոան Մանուկեաններու, որոնք միշտ թիկունք կանգնած են կազմակերպութեան եւ այս տարի, Նոր Տարուան եւ Ս. Մննդեան առիթով, իրենց բարեմաղթանքները կ'ողողեն այս նուիրատուութեամբ»:

Բաֆֆի եւ Ճոան Մանուկեանները, «Հորիզոն» հեռատեսիլի 10ամեակին առիթով, 100,000 տոյրա նուիրատուութիւն մը եւս կատարած էին: Այս տասնամեակին առիթով կայա - ճաշկերոյթ մը ծրագրուած է յառաջիկայ Մայիսի 13ին, հովանաւորութեամբ Մանուկեան ամուրին:

Ս. ՃՈՒՐԴԸ ԵՒ ԱՍՏՈՒԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ՝ ՆՈՐ ՄԻՍԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Ուրախութեամբ կը տեղեկացնենք մեր սիրելի ծխախնէներուն, թէ յառաջիկայ Հինգշաբթի, 6 Յունուար 2000ին, Ս. Մննդեան եւ Աստուծայայտութեան տօնին առիթով, Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ՝

ԳԵՐԸ. Տ. ՏԻՐԱՅՐ ԵՊՍ. ՓԱՆՈՍԵԱՆ

Այս առիթով, կը հրաւիրենք մեր բարեպաշտ հաւատացեալները, որպէսզի ներկայ գտնուին օրուան խորհուրդին եւ մասնակից դառնան հոգեպարարարարողութեան:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՂԱՐԱԲԱՂԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԵՐԿԱՐԱՁԳԵՑ ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

29 Դեկտեմբերին, Լեւոն Գայիճ Դարաբաղի ՀԱՄ-րապետութեան Ազգային Ժողովը մէկ տարիով երկարաձգեց ստիպողական վիճակը երկրին մէջ, որ ի զօրու էր 1992Էճ ի վեր:

Ազգային Ժողովը վաւերացուց այս ուղղութեամբ Գախագահի կողմէ յղուած Գախագիծ մը:

Այստեղ յայտնեց, որ օրուան Գիտը պոլթոթի ենթարկուեցաւ խումբ մը պատգամաւորներու կողմէ, որոնք բաճակի պաշտօնագուրկ հրամանատար Սամուէլ Բաբայեանի կողմնակիցներ էին: Անոնցմէ մէկը՝ Մուրատ Պետրոսեան, յայտարարեց, թէ խորհրդարանի աշխատանքներուն պիտի չմասնակցի, մինչեւ որ խորհրդարանը յատուկ օրէնք մը որդեգրէ՝ երաշխաւորելու համար հետադարձութիւնները, որոնք ընդհանուր ընդդիմութեան իրաւունքը:

ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋՆԵՐՈՒ ՎԵՐԱՆՈՐԴՄԱՆ ԾՐԱԳԻՐ ԱՐՅԱՆԻ ՄԷՋ

Հայ Օգնութեան Միութիւնը (ՀՕՄ) երկու տարիէ ի վեր սկսած է Լեւոնային Դարաբաղի Հանրապետութեան կիսաքաղաքի եւ Լեւոնային մանկապարտէզներու վերակառուութեամբ իր ծրագիրը: Անցեալ տարի Կիպրոսի Հայ Օգնութեան Միութեան մասնաճիւղի աջակցութեամբ բացուեց կատարուեցաւ Ստեփանակերտի ՀՕՄի «Սօսէ» մանկապարտէզին, որ յատուկ է երեք մէկ վեց տարեկան ծնողազուրկ մանուկներու:

Ներկայիս եւս վերոյիշեալ ծրագիրը կը շարունակուի: Մոնթեալի Ռաշտ Կառնտէյը՝ կազմակերպութիւնը ստանձնեց Լեւոնային Լեյզեստան գիւղի մանկապարտէզի վերանորոգումն ու տարեկան ծախսերը: Ծրագիրը կը շարունակուի մաւրայ կազմակերպութիւններու աջակցութեամբ:

Այսպէս, Արեւելեան Միացեալ Նահանգներու Հայ Երիտասարդաց Կազմակցութիւնը յատկացում կատարեց Մարտուհիի Անդուր գիւղի մանկապարտէզին վերանորոգման համար: Ապահովւած է նաեւ Քառատաշի ՀՕՄի մասնաճիւղին եւ Միշիկընի «Լեւոնա» Պատարեան Թրաքսը՝ ընկերութեան աջակցութիւնը՝ ընդհանուր ծրագիրը իրականացնելու գծով:

Վերոյիշեալ ծրագիրի իրականացման համար ՀՕՄը նպաստ կը ստանայ նաեւ անհատ անձնաւորներէն: Այստեղ պէտք է յայտնել նաեւ, թէ միութիւնը կը ծրագրէ Շուշիի մէջ մանկապարտէզի մը վերակառուցումը:

Մանկապարտէզներու վերանորոգման ծրագրի գործադրութեամբ՝ աւելի քան 270 ծնողազուրկ երեխաներ պիտի ստանան համապատասխան գոյրգոյրանք եւ հոգեկան ու ֆիզիքական սնունդ՝ դառնալու համար առողջ եւ գործունէալ քաղաքացիներ:

«ԵՍ ՄԱՐՏԱԳԱՇՏԷՆ ԿԸ ՄՏՆԵՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՊԱՐԷՋ»

Կ'ԸՍԷ ՍԱՄՈՒԷԼ ԲԱԲԱՅԵԱՆ

Արցախեան «10րդ Գահանգ» շաբաթաթերթին մէջ տպուած հարցազրոյցով Լեւոնային Դարաբաղի պաշտպանութեան նախկին նախարար Սամուէլ Բաբայեան յայտարարեց, թէ ինք մարտադաշտէն կը մտնէ քաղաքական ասպարէզ եւ հակառակ այն իրողութեան, որ քաղաքականութիւնը սկսաւ խրամատներէն, բայց կը շարունակուի սեղաններուն շուրջ:

Սամուէլ Բաբայեան աւելցուց, որ ինք կը վերցնէ քաղաքական ասպարէզին մէջ իրեն նետուած ձեռնոցը, եւ որովհետեւ դարաբաղեան տագնապի լուծումը ունեցաւ դիւանագիտութեան ձեռքը ուստի իր ուժերը պիտի փորձէ այդտեղ: Այդ պատճառով ալ ինք ոչ մէկ երեւոյթէ կը խուսափի:

Այն հարցումին, թէ արդե՞ք քաղաքական ասպարէզ առանձին կ'իջնէ, Սամուէլ Բաբայեան բացասական պատասխան տուաւ՝ բացառելով, որ յառաջիկայ տարի պիտի գրանցուի իր ստեղծած կուսակցութիւնը, որուն պայմանական անունը «Միացեալ Հայաստան» է: Անոնք, որոնք այս գաղափարը առարկայական եւ չօշափելի կ'ուզեն դարձնել, պիտի անդամագործուին այդ կուսակցութեան:

ԾԽԱԽՈՏԻ ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Դեկտեմբերի 28ին Ազգային Ժողովին մէջ քննարկուեցաւ 1997 Մայիս 30ին ընդունուած որոշում մը փոփոխութեան ենթարկելու հարցը, որ կը վերաբերի Հայաստանի մէջ արտադրուող եւ դէպի Հայաստան ներածուող ծխախոտի արտադրութեան համար պետական սակեր ճշդելուն:

Ժողովի ընթացքին պատգամաւորները նշեցին, թէ ծխախոտի արտադրութեան սակերու բարձրացման պարագային, անոր մաքսանենգութեան տոկոսը կ'աւելնայ:

Պատգամաւոր Մանուէլ Բաղէեանի կարծիքով, սակերը ճշդելու իրաւունքը կառավարութեան ձգելով՝ խորհրդարանը այդ իրաւունքն չի կրնար ձեռնպահ մնալ: Մանաւանդ որ Հայաստանի մէջ վերջին ամիսներուն ծխախոտի մաքսանենգութիւնը հասած է 30 տոկոսի: Ծխախոտի սակերը բարձրացնելով՝ մէկ կուկէս տարի առաջ նախատեսուած պիտեճէական չահերէն պակսած է 2 միլիարդ դրամ:

Ծխախոտի մաքսանենգութեան առաջը առնելու համար կարեւոր է նաեւ շրջանի մաքսային ասպարէզին մէջ համապատասխան քայլերու ձեռնարկել: Այսպէս, վրաստանի մէջ 1 տուկի ծխախոտին գինը 27 սենթ է (Յունուարէն ետք պիտի բարձրանայ), Հայաստանի մէջ՝ 30 սենթ, եւ այդ տարբերութիւնը կը նպաստէ, որ ծխախոտ վրաստանէն մաքսանենգութեամբ Հայաստան ներածուի:

Խորհրդարանին ներկայացուած նախագիծով կ'առաջարկուի, որ յառաջիկայ երեք ամիսներուն եւս տրուի ծխախոտի սակերը ճշդելու իրաւունքը կառավարութեան: Մինչեւ որ Ազգային Ժողովը փոփոխութեան ենթարկէ տուեալ օրէնքը:

«ԵՐԵՒԱՆ» ՍԹԻՏԻՈՅԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ՎՏԱՆԳՈՒԱԾ

Դեկտեմբեր 29ին Հայաստանի Ծարժապատկերի Տան մէջ տեղի ունեցած մամուլային մը ընթացքին պատկերասփիւռի ժապաւններուն «Երեւան» սթիւտիոյի ստեղծագործական խմբակը հրապարակեց իր բաց նամակը, որ ուղղուած էր Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Արամ Սարգսեանին:

Ստեղծագործական խումբի անդամ Տաւրոս Դաշտենց որպէս նախարան լրագրողներուն ներկայացուց սթիւտիոյին մէջ տիրող անմիջական կարգի ճակը, ինչպէս՝ տնօրէնին (Տիգրան Խզմայեան) անպատասխանատու աշխատելակերպը, ստեղծագործական խումբի հեռացումը սթիւտիոյէն, նիւթական չարաշահումներ եւ այլն: Անոր կարծիքով, եթէ այս հարցը լուծում մը չունենայ, ապա որոշ ժամանակ մը ետք «Երեւան» սթիւտիոն այլեւս կը դադրի իր նպատակին ծառայելէ:

Նամակին մէջ իշխուած են «Երեւան» սթիւտիոյի պատրաստած գեղարուեստական, վաւերագրական եւ երաժշտական 600 տեսաբեկները, որոնք երկար տարիներ կարեւոր դեր խաղցած են Հայաստանի Հանրապետութիւնը օտար երկրներէն ներկայացնելու աշխատանքին մէջ:

Ստեղծագործական խմբակի անդամները կը պնդեն, որ այսօր սթիւտիոյ ճակատագիրը վտանգուած է: Հետեւեալը այս խնդրի լուծման վերաբերեալ անոնք կ'ակնկալեն վարչապետին աջակցութիւնը:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆ ՊԵՅՐՈՒԹ - ԼԵՔԱՆԸ

ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՏՕՆԵՐ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Կը պատարագէ եւ կը քարոզէ ԱՐՀԻԱՊԱՏՏԻՒ ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ (Օգնական եպիսկոպոս պատրիարքութեան)

Հինգշաբթի, 6 Յունուար 2000, առաւօտեան ժամը 10:00ին, Սուրբ Աւետման Եկեղեցւոյ մէջ, Էշրեֆիէ:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Հինգշաբթի, 6 Յունուար 2000, Ս. Մննդեան տօնին առիթով, հանդիսաւոր Սուրբ Եւանգելիս պատարագ պիտի մատուցուի եւ ջրօրհնքի արարողութիւն պիտի կատարուի Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ:

Պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ՝

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ժամերգութիւն՝	Ժամը 7:00ից
Ս. պատարագ՝	Ժամը 9:30ից
Քարոզ՝	Ժամը 10:30ից
Ջրօրհնք՝	Ժամը 11:30ից

Ս. Պատարագը պիտի երգուի քառամայն կաթողիկոսարանի «ՇՆՈՐՀԱԼԻ» երգչախումբին կողմէ, ղեկավարութեամբ ՄԵՂՐԻԿ ՎՐԴ. ԲԱՐԻՔԵԱՆԻ:

Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու Սուրբ պատարագին, լսելու վեհափառ հայրապետին պատգամը եւ հաղորդուելու մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի Մննդեան վերակենդանացուցիչ խորհուրդովը:

ԴԻԻԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՏԱՆՕԹ.- Պատարագէն ետք, վեհափառ հայրապետը 2նորհաւորութիւններ պիտի ընդունի վեհարանի դահլիճին մէջ մինչեւ ժամը 1:30, իսկ կէսօրէ ետք ժամը 4:00էն 7:00:

ԱՍՏՈՒԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ՝ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի Սուրբ Մընըեան տօնին առիթով, Հինգշաբթի, 6 Յունուար 2000ին, հանգիսաւոր Սուրբ Եւանգելիս պատարագ պիտի մատուցուի Սուրբ Նշան Մայր Եկեղեցւոյ մէջ: Պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ՝

ԳԵՐՊ. Տ. ԳԵՂԱՄ Ծ. ՎՐԴ. ԽԱՇԵՐԵԱՆ

(Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)

Սկիզբ ժամերգութեան՝	Ժամը 7:30ից
Պատարագ՝	Ժամը 9:30ից
Քարոզ՝	Ժամը 10:30ից
Ջրօրհնք՝	Ժամը 11:30ից

Սիրով կը հրաւիրենք մեր սիրելի ժողովուրդը՝ ներկայ գտնուելու Սուրբ Եւանգելիս պատարագին, հաղորդուելու ու զօրակալու համար Բեթղեմէմեան խորհուրդով:

ԴԻԻԱՆ ԱՇԳԱՐԷԱՆ ԱՌԱՋԻՆՈՐԴԱՐԱՆԻ

Ս. ՃՆՈՒՆԴԸ ՍՐԲՈՅ ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Հինգշաբթի, 6 Յունուար 2000, Ս. Մննդեան եւ Աստուծայայտութեան տօնին առիթով, հանգիսաւոր Ս. Եւանգելիս պատարագ պիտի մատուցուի Սրբոց Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ մէջ:

Պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ՝

ԳԵՐԸ. Տ. ԵՓՐԵՍ ԱՐՔ. ԹԱՊԱԳԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան՝	Ժամը 7:00ից
Ս. պատարագ՝	Ժամը 9:30ից
Քարոզ՝	Ժամը 10:30ից
Ջրօրհնք՝	Ժամը 11:30ից

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՔԸ (ՔՆՆԱԴԿԱՆ ԿԱՆԽԱԴՐՈՅԹՆԵՐ)

«ՄՈՒՏՔ»

Ի տարբերութիւն մեր բոլոր նախկին ծրագրերի, 1998ի Ընդհանուր ժողովի կողմից ընդունւած Ծրագիրը սկսուում է *«Մուտք»*ով, ուր ընդհանուր գծերում բնորոշուում է Հ. Յ. Դաշնակցութեան իւրօրինը, գաղափարաբանական ուղղութիւնը եւ նրա հետապնդած նպատակների ընդհանրութիւնը։

«Մուտք»ով ուրուագծոււմ է նաեւ Հ. Յ. Դ. արժեքային համակարգի քառեակ էատարրերը, գաղափարները կամ աշխարհահայեացքային մեկնակտերը, որոնց համարկուած ամբողջականութեամբ է իմաստաւորուում Հ. Յ. Դ. գաղափարաբանութիւնը։ Դրանք են. Ազգայնութիւնը, Ընկերվարութիւնը, Ժողովրդավարութիւնը. *«Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր էութեամբ, աշխարհահայեացքով եւ ւաւանդներով ազգային, բնկերվարական, ժողովրդավարական եւ յեղափոխական կազմակերպութիւն է»։*

Այսպէս Հ. Յ. Դ.ն ներկայացում է որպէս հայ ազգի *«բովանդակ շահերի»* պաշտպան։ Սա էական բնորոշում է, որ հարազատօրէն ժառանգւած է մեր հիմնադիրներին Ռոստոմի եւ Ջաւարեանի մտքերին, եւ որ լաւապէս համահունչ է Հ. Յ. Դ. 1982ի ծրագրում այս առնչութեամբ պարզւած դիտանկեան ընդհանուր ոգուն։ Ռոստոմը, Հ. Յ. Դ. 2որրորդ Ընդի. ժողովում (1907), անդրադառնալով Հ. Յ. Դ.ի դերին որպէս ընկերվարական կուսակցութիւն, պարզաբանում էր, թէ ինչպէս կարելի է ոչ ազգովին եւ միայն աշխատուորների հասարական հիմքի վրայ յենուելով պայքարել բովանդակ ազգի բարօրութեան համար։ Իսկ Ջաւարեանը, նոյն տեսանկիւնի հիման վրայ, արծարծում էր այն միտքը, որ Դաշնակցութիւնը, հայ աշխատաւոր դասակարգի շահերը պաշտպանելու դիրքերից, պիտի բարձրանայ հայ ազգի բովանդակ շահերի պաշտպանութեան դիրքերը։

«*Ազգի բովանդակ շահերի»* եւ ոչ հասարակական որոշակի շերտի կամ դասակարգի շահերի պաշտպանութեան դիրքը, որ բխում է գաղափարաբանական խորքային համագոյնքներից ու նաեւ սահմանագաւտում է ուրոյն ընկերվարական միտքը համայնավարական տեսակից, որդեգրել են բազմաթիւ ընկերվարական եւ ընկերվար - ժողովրդավար կուսակցութիւններ։

Այս առոււով ահա թէ Ծրագիրի *«Մուտք»*ը ինչպէս է ներկայացնում Հ. Յ. Դ.ին. *«Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր բոլոր ուժերով պայքարում է հայ ազգի քաղաքական - տնտեսական, բնկերային - մշակութային բովանդակ շահերի պաշտպանութեան համար»։*

Ապա ներկայացում է դաշնակցական գաղափարական պատկերացումը ազգային ազատագրական պայքարի մասին. *«Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը հիմնաւորում է իր գաղափարաբանութեամբ։ Նա առաջարկում է անհիտի ազատութեան, ազգային ինքնորոշման եւ անկախ պետականութեան, բնկերութեան համերաշխութեան եւ բարօրութեան ծանապարհով հայ մարդու եւ հայ ազգի անկաշկանդ, բազմակողմանի եւ ներդաշնակ զարգացման ապահովումը»։*

Այս ընկալւումը, այսինքն ազգային ազատագրութեան եւ հասարակական բարօրութեան ու արդարութեան զուգահեռութեան սկզբունքը, շատ խոր եւ պատմական արմատներ ունի դաշնակցական արժեքային համակարգում։ Այս ուղղութեամբ թերեւս ամենակուր բանաձեւումը տուել է Գարեգին Խաժակը, համաձայն որի, ինչպէս իւրաքանչիւր ազգային շարժում ունի հասարակական պատճառներ ու արմատներ, այնպէս էլ փոխադարձաբար ամեն հասարակական շարժում խորքում ազդուած է ազգային նկարագրային ստորոգէիներէր։ Մէկի ազատագրութիւնը առանց միւսի վաղանցիկ է եւ թերի։

Իսկ վերջում, առանց մանրամասնելու, ընդհանրական բնութագրումներ է տալիս Դաշնակցութեան հետապնդած նպատակների շուրջ. *«Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը ձգտում է Հայ Դատի լուծմանը, ամբողջական հայութեամբ ամբողջական հայրենիքի կերտմանը»։*

«Հ. Յ. Դ. ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՔԸ»

Է. Յ. Դ. Ծրագրի «Է. Յ. Դ. Գաղափարաբանութեան հիմքը» գլուխը հիմնականում բաղկացան է վեց ենթագլուխներից։

Առաջին ենթագլուխը համառօտ ակնարկով բացատրում է մարդկային պատմութեան անցած ուղիին։ Զգալիօրէն այս բացատրման խորքում ընկած չէ որեւէ օտար վարդապետութեանը կամ փիլիսոփայական դպրոցին յատուկ մեթոտաբանութիւն։ Ինչպէս, օրինակ, պատմական նիւթապաշտութեան մօտեցումներն ու օրինջափառութիւնները, իրարայլադրի հասարակական կազմաւորութիւնների (Ֆորմացիա) պատմաբանական տեսութիւնը եւ դասակարգային պայքարների ներկայացումը որպէս պատմութեան առաջընթացի միակ ուժն ու շարժիչը։ Ահա այն ինչ բացարձակ ընդգծում է իբրեւ պատմական համատարած երեւոյթ. *«Պատմութեան ընթացքում դրսեւորուել են մարդու նկատմամբ մարդու տիրապետութիւնը եւ աշխատանքի շահագործումը»։*

Իսկ մարդկային առաջադիմութիւնը, ըստ Ծրագրի, անկատար է նկատւում *«... այնքան ժա-*

մանակ, քանի դեռ ի նպաստ իրենց բարօրութեան մարդկային մտքի եւ աշխատանքի նուաժումներից օգտուելու հաւասար հնարաւորութիւն չունենն բոլոր անհատները, ընկերային հաւաքականութիւնները եւ ազգերը»։

Շարքային (Ֆորմացիոնալ) տեսութիւնների խնդրաբայոյց եւ ոչ ընդհանրական բանաձեւերից խուսափելով հանդերձ, Ծրագիրը, առանց հերթական փորձի, ներկայացնում է տիրապետութեան եւ շահագործման տարբեր ձեւաւորումները. *«Տիրապետութեան եւ շահագործման տարբեր ձեւերն են դրամատիրութիւնը, կայսերապաշտութիւնը, ամբողջատիրութիւնը, գաղութատիրութիւնը...»։*

Յատկանշական է, որ տիրապետութիւն (domination) եւ շահագործում (explotation) գոյգ հասկացութիւնները յաճախ միասին գործածուել են Ծրագրում, թերեւս որպէս միեւնոյն երեւոյթի զանազան դրսեւորումներ. մէկը միւսի նկատմամբ որպէս լրացուցիչ ըմբռնում։ Ըստ իս, այս զոյգ հանգամանքները, մեթոտոլոգիական լայն կարելիութիւն են ընձեռելւ մարդկային պատմութեան մէջ դիտարկելու ոչ միայն հասարակական - տընտեսական եւ դասակարգային հակասութիւններն ու ընդհանրումները, այլեւ միջ-պետական, ցեղային, դասնական, մշակութային եւ մանատիպ միւս բոլոր տեսակի այլ հակամարտութիւնները, որոնք հակառակ նիւթապաշտական դպրոցների տրամաբանութեան, դասակարգային հակասութիւնների սուկական հետեւանքները չեն եղել այլ յաճախ որպէս անկախ գործօծներ, իրենց հերթին, խոշոր դեր ու կշիռ են ունեցել մարդկային պատմութեան մէջ։

Տիրապետութեան եւ շահագործման երեւոյթների ուրուագծման աղբյւրը, այս ենթագլուխում ազատութեան եւ հաւասարութեան սկզբունքները եւ դրանց իրականացման համար տարուող պայքարը բնութագրւում են որպէս անխուսափելի եւ անշրջելի ձգտում. *«Բայց մարդ անհատը, բնկերային հաւաքակնութիւնները, ժողովրդուղները եւ ազգերը ձգտել են ազատութեան ու հաւասարութեան եւ պայքարել դրանք իրականացընելու համար»։*

Ազատութեան եւ հաւասարութեան գաղափարները կամ ընդհանրապէս ազատագրութիւնը երեւակայական չեն, դրանց իրականանալու ուղղութեամբ մղուող պայքարը, ըստ Ծրագրի, եւ բնական է, եւ օժտուած գիտակցութեան ազդակով, որը *«ընթանում է մարդու եւ հասարակութեան կեանքի զարգացման զոյգ գործօծների առարկայական եւ ենթակայական ազդակների փոխ - ներգործութեամբ»։*

Ծրագիրը այստեղ ամրագրում է դաշնակցական պատմական - փիլիսոփայական այն դրոյթը, ըստ որի առարկայական եւ ենթակայական գործօծների համարական փոխներգործութեամբ է պայմանաւորուում մարդկային զարգացումը։ Պատմաէան - փիլիսոփայական այս ինքնուրոյն մօտեցումը ձեւաւորում եւ յղկման բաւական ուղի է կտրել մեր գաղափարաբանական գրականութեան մէջ, որին, ըստ ընկ. Հրայշ Տասնապետեանի, կարելի է նաեւ «պատմական իրապաշտութիւն» անոււնը տալ։

Ստաժեկներպայքին այս համակարգի տրամաբանութեամբ է, որ դուում է ազգային ազատագրական պայքարների եւ հասարակական շարժումների բանական զուգահեռութեան եւ դերակատար փոխկապուածութեան սկզբունքը. *«Այդ պատմական հուճի մէջ տեղ են գտնում եւ ազգային ազատագրական պայքարները, եւ մարդկային ընկերութեան բնաշրջական կամ յեղափոխական առաջընթացը դէպի քաղաքական, բնկերային եւ տնտեսական իրաւունքների հաւասարութիւնը կենսազորժող արդար կարգեր»։*

Յատկանշական է, որ նախ մարդկային ընկերութեան առաջընթացի հարցում բնաշրջական կամ յեղափոխական ուղիներով ըմբաշուլ տեսութիւնը, որով յստակ կերպով սահմանագատւում է մեր աշխարհընկալումը մէկ կողմից հասարակական զարգացումը միմիայն եղափոխութեան առաջընթացով բնորոշող աչ գաղափարաբանութիւններից. իսկ միւս կողմից իրական զարգացումը միմիայն յեղափոխութեամբ պայմանաւորուող ծայրայեղ ծախ գաղափարախօսութիւններից։ Ապա *արդար կարգերը* ներկայացում են որպէս վախճանական նպատակ, տեսլական։

Այլ խօսքով այստեղ հաստատւում է այն, որ մեր գաղափարաբանական «գործընթացը չի աւարտւում բարեփոխումներով, այլ ընդգրկում է արդար կարգերի կամ համակարգի կերտման լայն հեռակար։

Երկրորդ ենթագլուխ Ծրագիրը գնահատականներ է տալիս աշխարհի ներկայ կացութեան։ Եւրոտարարութեստականացման ու արհեստագիտութեան արագ զարգացման ակնարկելով, հաստատւում է. *«... Մարդկային ընկրիութիւնը շարունակում է ենթակայ մնալ ներազգային կամ ազգամիջեան մակարդակների վրայ խտրականութիւնների եւ բեւեռացումներից»։*

Վերագրեալ իրավիճակի վերլուծումը խորացընելով Ծրագիրը ժամանակից համաշխարհային տիրապետութեան հիմքում նկատւում է երկու զլխաւոր համակարգերի գոյութիւնը արեւմտեան տեսակի դրամատիրական եւ խորհրդային տեսակի ամբողջատիրական կարգերը։ Վերջիններս *«... գաղափարախօսական եւ այլ պիտակների անուան տակ հաստատեցին պետական դրամատիրութիւնն ու բռնապետութիւնը ոտնահալելով ենթակայ ժողովրդողների ազգային - քաղաքական եւ ընկերային - տնտեսական ազատութիւններ եւ իրաւունքները»։*

Իսկ դասակարգային տարբերութիւնների եւ ընկերային համերաշխութեան խախտման հիմնական պատճառը գտնում է *«փոքրամասնութեան ձեռքում տնտեսական եւ քաղաքական իշխանութեան կենտրոնացման»* մէջ։ Այդ ուժի կենտրոնացումը, սակայն, ըստ Ծրագրին, սահմանափակուած չի մնացել տեղական չափերում է, նուաճելով միջազգային մակարդակ, վերածուել է մեծապետական համակարգի. որին *«... նոյնիսկ իրենց անկախութեանը տիրացած պետութիւններից ու ժողովրդողներից շատերը ենթակայ են մնացել...»։*

Անդրադառնալով դրամատիրութեան ներկայ հանգրուանին, ծրագիրը յատկա-

նշում է տնտեսութեան համաշխարհայնացման (Globalization) երեւոյթը, որը *«բնորոշւում է նորագոյն արհեստագիտութեամբ, մարդուժի որաւկան զարգացումով, հաղորդակցային ցանցերի եւ տեղեկութիւնների ընդարձակումով»։*

Ծրագիրը հաստատում է նաեւ, որ, իր բոլոր բարիքներով հանդերձ, համաշխարհայնացումը ւսելի բացասական հետքեր է թողել եւ շարունակում է թողնել։ Բացասական այդ հետքերն են. *«... Ազգային տնտեսութիւնների քայքայում, աշխատուժի զանգուածային տեղաշարժ, գործազրկման աճ, աշխատանքի արժեզրկում, տեղեկութիւնների տիրապետում եւ շահխանդոր օգտագործում, որակեւր մարդուժի շահագործում, ազգային մշակոյթները խաթարող սպառողական կեղծ մշակոյթի կազմաւորում»։*

Ներազգային եւ համաշխարհային այդ չարիքների շահագործման եւ իրաւազրկման դէմ պայքարը, հետեւաբար, *«... ենթադրում է քաղաքական ու տնտեսական ազատութիւնների եւ մշակութային ինքնուրոյնութեան ձգտում թէ ներքին, թէ արտաքին ճակատների վրայ»։*

Երրորդ ենթագլուխը փաստօրէն մի ընդհանրական բանաձեւում է, մի համառօտագրութիւն Հ. Յ. Դ. ընկերվարական գաղափարի մասին։ *«Հայ Յեղափոխական Դաշնակցութեան համոզումով ընկերվարութեան ճանապարհով է, որ մարդկութեան քաղաքական, տնտեսական եւ բնկերային զարգացումը օժտւում է արդար եւ համերաշխ յարաբերութիւններով»։*

Այստեղ ծրագիրը ակնարկում է արդարութեան եւ համերաշխութեան սկզբունքներին։ Համերաշխութիւնը չպիտի չփոթել անշարժ կամ կայուն անդորութեան հետ, որը, ըստ էութեան, վաղանցիկ է եւ բաց համակարգերին մատնելու է ապաւանուութեան։ Համերաշխ յարաբերութիւնները խորքում նշանակում են հասարակական այնպիսի կարգապահութիւն, որտեղ բազմատիպ հարցերի բարենպաստ լուծման համար գոյութիւն ունի բազմամակարդակ օրէնքների կանխորոշում համակարգ, որը համընդհանուր կերպով ստեղծում է եւ լիցակտար մասնակցութիւն, եւ անկաշկանդ միջակցութեան միատեղ գոյութեան կայուն ոլորտ ու պայմաններ։

«Ընկերվարութիւնը ձգտում է ինչպէս անհատի եւ նրա աշխատանքի ազատագրութեանը, այնպէս էլ ազգերի իբրեւ հաւաքական անհատականութիւնների ամբողջական ազատագրութեանը, անկախութեանն ու գերիշխանութեանը եւ նրանց համերաշխ համակեցութեանն ու իրաւահաւասար գործակցութեանը»։

Այսպիսով Ծրագիրը արծարծում է այն ըմբռնումը, ըստ որի ընկերվարութիւնը ոչ միայն հասարակական, տնտեսական կամ աշխատանքի, այլ նաեւ ազգերի ազատագրութեան գաղափար է։ Եւ սա բխում է շատ պարզ տրամաբանութիւնից. ով ձգտում է հասարակական ազատութեանն ու արդարութեանը, նա չի կարող չձգտել ազգային ազատագրութեան, եւ փոխադարձաբար ով կապտակ է հետապնդում ազգի ազատ ու անկաշկանդ զարգացման ուղղութեանը, նա չի կարող անտարբեր գտնուել հասարակական արդարութեան եւ ընկերային համերաշխութեան հարցի նկատմամբ։

Ըստ էութեան այս երկուսը լրացուցիչ են եւ զուգահեռ, *«այս զուգահեռ պայքարները մղւում են ժողովրդավարական միջոցներով, իսկ ժողովրդրդավարութեան խափանման պարագայում, նաեւ յեղափոխութեամբ»։*

Յատկանշական է այստեղ այն պարզ ու մեկին սահմանւումը, որ ծրագիրը տալիս է մեր յեղափոխականութեան տեսութեան եւ ազգային, եւ հասարակական ազատագրութեան զոյգ բնագիւտւմներում։ Ոմանք փափաքում են մեր յեղափոխականութիւնը միմիայն տեսնել ազգային ազատագրական պայքարի դաշտում, իսկ ոմանք էլ միմիայն հասարակական գետնի վրայ։ Ծրագիրը այսպիսով հաստատւում է այն, որ երկու բնագիւտներում էլ եթէ խափանւում են խաղաղ եւ ժողովրդավարական պայքարի բոլոր հնարաւորութիւններն ու ձեւերը, ապա, որպէս բնական իրաւունք եւ անհրաժեշտութիւն, անխուսափելի է դառնում յեղափոխութիւնը։ Այլ խօսքով իրական յեղափոխականութեան տեսութիւնը թերեւս գատորշւում է արկածախնդրութեան կամ կոյր վիպապաշտական մտազարթութիւններից դրանով, որ յեղափոխութեան միջադէպ ընկալւում է ոչ որպէս *առաջին բաց* ճանապարհ, այլ իբրեւ *վերջին փակուղին շրջանցող քղանցքը*։

Չորրորդ ենթագլուխը արդէն սկզբունքներ, կիրառական հաստատումներ եւ որոշ մանրամասնութիւններ է տալիս Հ. Յ. Դ. ընկերվարական գաղափարի շուրջ։

Ծրագիրը հաստատում, որ *«Հ. Յ. Դաշնակցութեան ընկերվարական իտելալ կերտումն է այնպիսի հասարակութեան, ուր մարդը ազատազրուած կը լինի ռասայական, կրօնադաւանական, ազգային, քաղաքական, բնկերային եւ տնտեսական ամեն կարգի խտրականութիւնից, կաշկանդումից, բռնութիւնից եւ շահագործումից»։*

Ընդգծելի է այստեղ *հասարակութեան կերտումը* բառակապակցումը, որով դարձնալ Ծրագիրը ամրագրում է այն միտքը, որ մեր գաղափարաբանական կուրսը չի աւարտւում բարեփոխումներով այլ ընդգրկում է արդար կարգերի, համակարգի կամ հասարակութեան կերտման հեռանկար։

Ապա, Ծրագիրը պարզորոշ կերպով ընկերվարութեան իրագործումը պայմանաւորում է *«ընկերային համերաշխութեանն ի խնդիր, տնտեսական յարաբերութիւնները, կանոնակարգելու»* գործում. *«... Ժողովրդավարութեան կիրարկումով... բոլոր քաղաքացիների մասնակցութեամբ»։* Երբ խօսւում է կանոնակարգման մասին, դա որոշակիօրէն պարզում է ընկերվարութեան իրաւակարգային բնոյթ մեր ընկալումը, այն որ ընկերվարութեան իրագործումը էապէս նախ օրէնքի եւ իրաւականութեան հարց է, որի մշակման գործում առաջնային նշանակութիւն է տրւում բոլոր քաղաքացիների ժողովրդավարական մասնակցութեան։

Ծրագիրը, որպէս ընկերվարութեան ընթացակարգային եղանակ, ընդունում է ճարտարարութեստի եւ երկրագործութեան մէջ բազմաձեւ սեփականատիրութեան ձեւերի *«պետական, հաւաքական-համագործակցական եւ մասնաւոր-անձնա-*

կան» միատեղ գոյութեան սկզբունքը, որպէս ընկերութեան բարգաւաճման խթան, սակայն պայման է համարում, որ *«նրա սահմանագծումը, օգտագործումը եւ կազմակերպումը կատարուեն ընկերային ուղղութեան հակակշռի սկզբունքով, շահագործումը վերացնելու ձգտումով, հարստութիւնների կենտրոնացման եւ մեծաշընորհների առաջացման բացառումով»։*

Սահմանագծման եւ կազմակերպման հարցը ինքնին ենթադրում է համապատասխան օրէնքների մշակում եւ դրանց իրաւական աշխատակարգերի ստեղծում, որոնց միջոցաւ պիտի իրականացնել հետեւեալ չորս սկզբունքները։

- Ընկերային ուղղութեան հակակշիռը (սամաբաժնակութիւնները վերացնելու գնադոյացման հարցում)։

- Շահագործումը վերացնելու ձգտումը (աստիճանակարգ արդարութեան հասնելու համար)։

- Հարստութիւնների կենտրոնացման կանխումը (դասակարգային ճեղքերը չխորացնելու համար)։

- Մեծաշնորհների առաջացման բացառումը (դասակարգային բեւեռացումները կանխելու համար)։


Բնականաբար, տրամաբանական չէր լինի, եթէ Ծրագիրը օրէնքների նախագիծ կամ մանրամասնութիւններ տար սեփականատիրութեան ձեւերի եւ դրանց ներքին հակակշռող համակարգի հետ կապուած, այնուամենայնիւ, այն կարելուր հաստատւումով է հանդէս գալիս ազգային հարստութիւնների նկատմամբ, որպէս գեր-խնդիր ունենալով *«Ազգային հարստութիւն են եւ ռազմավարական նշանակութիւն ունեն մշակոյթը, հողը եւ ընդերքը, բնական միջավայրը եւ պաշարները»։*

Մի շարք ստորոգէալներ պարզելուց յետոյ, այս ենթագլխի վերջում, Ծրագիրը դարձեալ շեշտաւորում է Հ. Յ. Դ. դաւանած ընկերվարութեան ազգային ուղղութեանութիւնը, այն, որ դա ամենիշականօրէն հակադրուելով կամ համընկնելով հասարակական որոշակի շրտտրի շահերին, այնուամենայնիւ, իր հեռահար նպատակների առւումով ապա դասակարգային եւ համազգային բովանդակութիւն է կրում եւ միտում է ծառայել բովանդակ ազգի զարգացմանը։ *«Այս տեսլականի իրականացումը, հակադրուելով հանդերձ իշխող դասակարգերի անմիջական շահերին, կ'իրականանայ յօգուտ ոչ միայն աշխատաւոր ընդհանրութեան, այլեւ համայն ազգի բնականոն զարգացման»։*

Հինգերորդ ենթագլխում համապարփակ կերպով բացատրւում է Դաշնակցութեան ազգայնութեան տեսութիւնը։ Յատկանշ

ԻՍԹԵՏԻԿԱՆ ԻՄՍԵՆՏԻՆԱԿԱՆ

Պարոտայեց՝ Թ. Ա.



ԵՈԶԻՓ ՍՔՈՊԼԱՐ
ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ
ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻ ՄԱՐԶԻՉ

Երէկ Լիրանանի ֆուտբոլի ֆետերասիոնը պաշտօնապէս պայմանագրութիւն ստորագրեց խրուաթ անւանի մարզիչ Եոզիփ Սքոպլարի հետ, որուն առաքելութիւնը պիտի ըլլայ Լիրանանի ազգային խումբը առաջնորդել Ասիոյ 2000ի ախոյեանութեան, որ առաջին անգամ ըլլալով տեղի պիտի ունենայ Լիրանանի մէջ։

59 տարեկան Սքոպլար ամուսնացած է եւ ունի 4 զաւակ։ Ան հանրածանօթ յառաջապահ մը եղած է եւ մաս կազմած է եւրոպական մեծ ակումբներու, ինչպէս՝ Հանովը (Գերմանիա) եւ Մարսէյ (Ֆրանսա)։ Սակայն Մարսէյի չափիկով է, որ ան առաւելաբար վայելած է մեծ հռչակ։ Սքոպլար 1971ին, 1972ին եւ 1973ին հանդիսացած է Ֆրանսայի կոլաբորըր եւ Մարսէյի չափիկով նշանակած է 156 կոլ։ Մարսէյի հետ, Սքոպլար երկու անգամ չահած է Ֆրանսայի բաժակը եւ երկու անգամ՝ ախոյեանութիւնը, իսկ 1971-1972 եղանակին ան տուալէ իրագործած է իր խումբին հետ։

1972ին, Սքոպլար չահած է Եւրոպայի «ոսկի կօշիկ»ը (այսօրուան լաւագոյն մարզիկի տիտղոսը), որ կը շնորհուէր լաւագոյն կոլաբորըրին։ Անոր մրցանիշը՝ 44 կոլ (մէկ եղանակի ընթացքին) ցարդ կը մնայ ի գօրու։

Սքոպլար 35 անգամ կրած է նաեւ նախկին Եուկոս-լաւիոյ ազգային խումբին չափիկը եւ անոր հետ նշանակած է 15 կոլ։

Խրուաթ Սքոպլար 1977ին սկսած է մարզիչի պաշտօնին, իրրեւ Մարսէյի թեքնիք հարցերու տնօրէն։ Ապա մարզած է կարգ մը այլ խումբեր, ինչպէս՝ Հայդուկ Սփլիթ, որուն հետ չահած է Եուկոսլաւիոյ բաժակը (1987), Համպուրկ (1988), Տինամօ Զադրիկ (1989), Ռէալ Վալադոլիտ, որուն հետ հասած է Սպանիոյ բաժակի աւարտականին եւ մասնակցած է Եւրոպայի բաժակակիրներու մրցաշարին։

● Լիրանանի ազգային խումբը Զորեքշարթի 12 Յունւարին իր առաջին ելոյթը կ'ունենայ Սքոպլարի ղեկավարութեամբ։ Մրցակիցն է Եուկոսլաւիոյ բոլոր ժամանակներու գօրաւորագոյն կազմերէն՝ Պելկրատի «Կարմիր Աստղ»։ Մրցումը տեղի կ'ունենայ Պէյրութի քաղաքապետարանի դաշտին վրայ, ժամը 7։30ին։

Լիրանանի ֆուտբոլի ֆետերասիոնը կը տեղեկացնէ նաեւ, որ Սէուտական Արաբիոյ ֆետերասիոնը ընդառաջած է իր ազգային խումբին Լիրանան հրաւերին։

Սէուտական կազմը բարեկամական մրցիւմ պիտի կատարէ Լիրանանի ազգային խումբին դէմ՝ Սալաայի միջազգային դաշտին պաշտօնական բացման հանդիսութեան առիթով։ Դաշտը պիտի գործածուի Ասիոյ 2000ի ախոյեանութեան մրցումներուն։

ՊԱՍՔԵԹՊՈԼ ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՇԻՔԱԿՈ ՊՈՒԼԶԻ ՆԱՀԱՆՋԸ
ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Էւ. Պի. Էյի երէկուան մրցումներուն, Ֆիլատելֆիա 76ըր պոստալ կարեւոր յաղթանակ մը արձանագրեց, երբ յետ երկարաձգման 124-120 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Միլուոքի Պաքսը։

Մինչ Ֆիլատելֆիա կ'արձանագրէր եղանակի իր 18րդ յաղթանակը, անդին Միլուոքի իր կատարած վերջին հինգ մրցումներուն կը կրէր յաջորդական չորրորդ պարտութիւնը։

Յարդ միայն երկու յաղթանակ արձանագրած Շիքալօ Պուլպ կրեց իր 26րդ պարտութիւնը, իր հիւրէն՝ Փորթլենտ Թրէյլ Պլէյլըրզէն։

Հակառակ Աքսթի Փիփընի վերադարձին, կացութենէն քան չփոխուեցաւ եւ Պուլպ շարունակեց իր նախաընթացը։ Փիփըն նշանակեց 11 կետ եւ կատարեց 6 խօսք։

Եուրօ ձեյ արձանագրեց յաջորդական իր 7րդ յաղթանակը, իր դաշտին մէջ 109-89 արդիւնքով պարտութեան մատնելով Տենվըր Նակէթը։ Զեյի աստղեղէն Քարլ Մալոն նշանակեց 33 կետ։

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները.

- Պոսթըն Սէլթիքս - Բիլվիլէնտ Բալալիերը 105-98
- Ֆիլատելֆիա 76ըր - Միլուոքի Պաքս 124-120
- Ուաշինկթըն Ուիչարտս - Կոլտըն Սթէյթ Ուորիերը 99-87
- Տիքսոնիթ Փիւթըն - Օրլանտօ Մէճիք 118-106
- Փորթլենտ Թրէյլ Պլէյլըրզ - Շիքալօ Պուլպ 88-63
- Եուրօ ձեյ - Տենվըր Նակէթը 109-89

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը.

- Նիւ Ճըրզի Նէթ - Ինտիանա Փէյսըրզ
- Փորթլենտ Թրէյլ Պլէյլըրզ - Թորոնթօ Ռեփթըրզ
- Սաքրամենթօ Բինկ - Բիլվիլէնտ Բալալիերը
- Վանքուվըր Նակէթ - Մայնի Հիթ
- Պոսթըն Սէլթիքս - Նիւ Եորք Նիքս
- Աթլանթա Տըքս - Միլուոքի Պաքս
- Սան Անթոնիօ Սիլըր - Միննեսոթա Թինպըրվուլվ
- Սիէթլ Սուփըրսոնիքս - Հիուսթըն Ռոքէթ
- Տալա Մալթըրիքս - Տենվըր Նակէթ
- Չարլոթ Հօրնէթ - Ֆէօնիքս Սալպ
- Լոս Անճելըս Էնթըրզ - Լոս Անճելըս Բիլիերը

ՔԱՆԶԻՈ
ԱՅՍՕՐ ԿԸ ՄԿՍԻ
15ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆԸ

Իտալիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Քալչիօ) 15րդ հանգրուանը կը սկսի այսօր՝ Վենեցիա - Լացիօ Ռոմա հանդիպումով։ Վաղը տեղի կ'ունենան մնացեալ 8 մրցումները։

Նախափերջին դիրքը «գրաւող» Վենեցիա, որ այսօր կը հիւրընկալէ Կարապուլուի կապուր, շատ հաւանաբար պիտի փորձէ նուազաւոր զայ՝ ձակաւտումէն։ Մինչդեռ Վենետիկի ջուրերուն մէջ, մայրաքաղաքի տղաքը պիտի փորձէն հակառակը։ Լացիոյ մարմիչ Սվէն Կորսն Էրիքսոն որոշած է դաշտ չիջեցնել չիլիցի յառաջապահ Մարսելլօ Սալաը, որ նոր վերադարձած է Զիլիէն, ուր անցուց ծոնդի արարակութիւնը։ Սալա ունի նաեւ այլ «խաղ» մը. անոր կինը «վիրաւոր» է՝ ինքնաշարժ արկածի մը հետեւանքով։

Վաղուան 8 հանդիպումներուն մէջ չկան գաղաթի ձակաւտումներ թէեւ, այսուհանդերձ հետաքրքրական կը նկատուի Ուտիւնէլ (9րդ) - Փարմա (3րդ) մըրցումը։ Հիւր կապուր պիտի զոհուի ամենափոքր յաղթական վերադարձին (9րդ) - Փարմա (3րդ) մըրցումը։ Վաղուան 8 հանդիպումներուն մէջ չկան գաղաթի ձակաւտումներ թէեւ, այսուհանդերձ հետաքրքրական կը նկատուի Ուտիւնէլ (9րդ) - Փարմա (3րդ) մըրցումը։ Հիւր կապուր պիտի զոհուի ամենափոքր յաղթական վերադարձին (9րդ) - Փարմա (3րդ) մըրցումը։

ԼՈՒՐԵՐ՝ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՇԽԱՐՀԷՆ

- ՅՐԱՆՍԱՅԻ յառաջապահ Պրիւնօ Ռոտրիկէզ Երէկ Պրէտֆորտի միացաւ Լանսի, չորս տարուան պայմանագրութիւն մը ստորագրելով իր նոր ակումբին հետ, յայտնեցին Ֆրանսական Լիգայի միացաւ Պրիւնօ Ռոտրիկէզ, որ պայմանագրութիւն մը ստորագրած էր Փարիզ Սէն Ժերմէնի հետ, անցեալ Սեպտեմբերին ի վեր փոխ տրուած էր Պրէտֆորտի։
- Պաթթիայի եւ Մէսի նախկին այս մարզիկին փոխանցուած Լանսի արժեք շուրջ 3 միլիոն տոլար։
- ՊԵԼԶԻՔԱՅԻ միջազգային յառաջապահ Էմիլ Միքելա Երէկ լքեց իր կապուր՝ Սթանտար Լիէթը եւ միացաւ Շալթի։ 21 տարեկան Էմիլի փոխանցումը գերմանական կազմին արժեք շուրջ 9 միլիոն տոլար։
- Անոր փոխանցումէն քանի մը օր առաջ, Էմիլի եղբայրը՝ Մայօ Լաքս Էր Սթանտար Լիէթը եւ միացած՝ Միլուոքի Լիգային։
- Շալթի պրիմիաքսի յառաջապահ Միքելա Կոստան, ըստ կնքուած համաձայնագրի, մեկնեցաւ հակառակ ուղղութեամբ եւ

անոնց խմբակիցներուն առաքելութիւնը։

Երկրորդ դիրքը գրաւող Եուվենթուս Թորինի մէջ կ'ընդունի Վերոնան, որ կը գտնուի 13րդ դիրքին վրայ։ Մարիչ Բարլօ Անչելոթթի տղաքը ամէն գնով պիտի փորձէն երեք կետ ապահովել՝ տիտղոսին գծով իրենց բարձր յոյսերը վառ պահելու համար։ Սակայն Եուվէի գլխաւոր հարցը կը մնայ թիւ 13ի խնդիրը։ Իտալացիք ծանօթ են իբրեւ աւանդապաշտ ազգ եւ լրջօրէն հաւատք կ'ընծայեն, որ թիւ 13ը դըժբախտութեան հոմալիցի կ'ընդունի 13րդ դիրքին վրայ գտնուիլը այդքան ալ լաւ չի «բուր»...

Ա. Է. Ռոմա մայրաքաղաքին մէջ կը հիւրընկալէ Պարին։ Մարիչ Զապիօ Զափելլօն խումբը կ'ընդունի Լարոթիւններ դիմագրաւել մրցակիցին դէմ, որովհետեւ անոր «սիրտը» եւ իշխմանը իմքապետ Ֆրանչեսքօ Թորթի բացակայ է (կախկալում), իսկ պրապիլիցի միջնապահ Ասուքաօ Եապակից Զապիօ ժուրիոր բացակայ են, որովհետեւ նոր վերադարձած են Պարիլէն, ուր կ'անցընէին իրենց ծննդեան արձակուրդը։

Ֆիորենթինա պիտի այցելէ Լէչէի դաշտը։ Ֆիորենթի (Ֆրանսէրէն Զորանա) կապուր պետք է յաղթէ դասաւորման մէջ իր վարի անմիջական «դրացի»ին, որպէսզի ախոյեանութեան աւարտին յոյս ունենայ գրաւելու լաւ դիրք մը՝ Երոպա մեկնելու յոյսով։ Մարիչ Զիովանի Թրափաթիին համաձայն, իր խումբը պիտի յաղթէ Պարիի, նոյնիսկ եթէ իր կապուր եւ, ինչ որ պիտի դուստրացնէ վստահաբար

Փաուալինօ եւ Մաուրօ Պրեսան։

Ռեհինա (15րդ) կ'ընդունի Թորինոն (14րդ), իսկ Պոլոնիա՝ Բալիաին։ Այս պոյզ մրցումները յայտնապէս ամենէն աւելի պիտի մնան շուքի մէջ, որովհետեւ առայժմ կը նկատուի «անկարեւոր»։

Միլանօ քաղաքի երկու հակաւերը՝ Ա. Սէ. Միլան եւ Ինթեր Միլան ունին յարաբերաբար դիւրին մրցումներ։ Ա. Սէ. Միլան հիւրը պիտի ըլլայ Փիաչենցայի, իսկ Ինթեր պիտի հիւրընկալէ Փերուհին։

Ինտրես Ա. Սէ. որ այժմ կը գրաւէ 5րդ դիրքը, դաշտ պիտի ներկայանայ առանց լիպերիացի ժորժ Ռէալի, որ վիրաւոր է։ Կըրնան բացակայիլ նաեւ ուլքանացի Անտրէյ Շեշնէքօ եւ գերմանացի Օլիվըր Պիրիֆ։

Ինթեր Միլան եւ կը տանապի բաւալի տարրերու հաւանական բացակայութենէն։ Յառաջ պահ Քրիսթիան Վերի անհանգիստ է (կրիփ), մինչ Ռոնալտօ եւ յոյն միջնապահ Կրիկորի ձիորկաթու վիրաւոր են։ Մրցակից Փերուհի, որ միայն երեք կետով ետ կը մնայ Ինթերին եւ կը գտնուի դասաւորման 8րդ դիրքին վրայ, դաշտ պիտի ներկայանայ ամբողջական կապուր։

Ստորեւ՝ 15րդ հանգրուանի յայտագիրը

- ԱՅՍՕՐ
- Վենեցիա - Լացիօ
- ՎԱՐԸ
- Պոլոնիա - Բալիարի Ինթեր Միլան - Փերուհի
- Եուվենթուս - Վերոնա
- Լէչէ - Ֆիորենթինա
- Փիաչենցա - Ա. Սէ. Միլան
- Ռեհինա - Թորինօ
- Ա. Է. Ռոմա - Պարի Ուտիւնէլ - Փարմա

ԱՅՍՕՐ ԿԸ ՄԿՍԻ
ԱՇԽԱՐՀԻ ԱԿՈՒՄԲԵՐՈՒ
ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻԵՆԸ

Այսօր Պրազիլի մէջ կը սկսի ՖԻՖԱի կազմակերպած աշխարհի ակումբներու ախոյեանութեան մրցաշարքը, որ առաջին անգամ ըլլալով է, որ տեղի պիտի ունենայ՝ Մրցաշարք կը սկսի Զորեքշարթի, 5 Յունուարին եւ կ'աւարտի Ռեքաթ, 14 Յունուարին։

Մրցումները տեղի կ'ունենան Սան Փաուլօյի եւ Ռիօ Ժո ժանէյրօյի մէջ։ Մրցաշարքին իրենց մասնակցութիւնը կը բերեն ութ խումբեր, բաժնուած երկու խմբակի։

Իւրաքանչիւր խմբակի պարագլուխի դիրքերը գրաւող խումբերը կ'ապահովեն աւարտականի տոմսակը, իսկ երկրորդ դիրքերը գրաւող կազմերը իրարու դէմ կը ճակատին երրորդ դիրքին համար։

Բացման մրցումները այսօր Ռէալ Մատրիտ (Սպանիա) իր դէմ պիտի ունենայ Ալ Նասր խումբը (Սէուտական Արաբիա)։ մրցումը տեղի պիտի ունենայ ժամը 22։45ին՝ Պէյրութի ժամանակացոյցով։

Մանչեսթըր Եունայթըտ իր առաջին մրցումը պիտի կատարէ վաղը Հինգշաբթի, 6 Յունուարին, մեքսիքական Նեսաքսա խումբին դէմ, ժամը 22։15ին (Պէյրութի ժամանակացոյցով)։

Անգլիական կազմը մրցաշարքը պիտի սկսի եւ պիտի աւարտէ առանց միջնապահ Փօլ Սքոլլի, որ մէկ ամիս պիտի բացակայի դաշտերէն (վիրաւոր)։

Մրցաշարքին նախօրեակին, Մանչեսթըրի մարզիչ Ալեքս Ֆերըրը կ'ըսէ, թէ մասնակցող բոլոր խումբերն ալ կրնան դժուարութիւններ ունենալ, որովհետեւ տասը օրուան ընթացքին չորս մրցում կատարելու պիտի ըլլայ բաւական դժուար։

Իր կարգին, Ռէալ Մատրիտ բացակայ մարզիկներով դաշտ պիտի ներկայանայ։ Յառաջապահ Ֆերնանտօ Մորիենթէս վիրաւոր ըլլալով առաջին մրցումին դաշտ պիտի չկարենայ ներկայանալ։ «Նորեկ» մարզիկ Ֆրանսացի Նիքոլա Անելքա պիտի ըլլայ Մորիենթէսը փոխարինողը։

Ռէալի պարագլուխ յետապահ ժուլիօ Սեզար արդէն իսկ մրցաշարքէն դուրս մնացած է, վիրաւոր ըլլալով։

Սէուտական Ալ Նասր խումբին դէմ տեղի ունենալիք այսօրուան մրցումին սպանացի միջազգային երկու մարզիկներու՝ Ռաուլ Կոնցալէսի եւ Ֆերնանտօ Հիերոյի մասնակցութիւնը կը մնայ կասկածելի (վիրաւոր)։

Վասքօ Տա Կամա, որ իր առաջին մրցումը պիտի կատարէ վաղը՝ աւստրալիական Սաութ Մելբուրն խումբին դէմ, կը Զիմաուի տիտղոսին գլխաւոր թեկնածու ներկէ։

Անկա իր կազմէն ներս ունի պարագլուխ միջազգային նախկին մարզիկներ՝ Ռոմարիոն, Ժուրիօ Պալանտին եւ Ժորժինիոն, ինչպէս նաեւ միջնապահ Վալպէր եւ յետապահ Ալեքսանտր Թորէլը։

Ստորեւ՝ մրցումներուն ամբողջական յայտագիրը (փակագծէին մէջ նշուած են մրցումներուն ժամերը՝ Պէյրութի ժամանակացոյցով)։

- ՉՈՐԵՔԸՇԱՐԹԻ, 5 ՅՈՒՆԻՈՒՄ
- Ա. խմբակ (Սան Փաուլօ)
- Ռեալ Մատրիտ (Սպանիա) - Ալ Նասր (Սէուտական Արաբիա) (ժամը 22։45ին)
- Քորինթիանս (Պրազիլ) - Ռաիա Քազալլանքա (Մարոք) (ժամը 1։15ին)

- ԸՆԴԵՎՇԱՐԹԻ, 6 ՅՈՒՆԻՈՒՄ
- Բ. խմբակ (Ռիօ Ժո ժանէյրօ)
- Մանչեսթըր Եունայթըտ (Անգլիա) - Նեսաքսա (Մեքսիքա) (ժամը 22։15ին)
- Վասքօ Տա Կամա (Պրազիլ) - Սաութ Մելբուրն (Աւստրալիա) (ժամը 0։45ին)

- ՌԵՐԵԱՐԹ, 7 ՅՈՒՆԻՈՒՄ
- Ա. խմբակ (Սան Փաուլօ)
- Ռեալ Մատրիտ (Սպանիա) - Քորինթիանս (Պրազիլ) (ժամը 22։45ին)
- Ռաիա Քազալլանքա (Մարոք) - Ալ Նասր (Սէուտական Արաբիա) (ժամը 1։15ին)

- ՇԱՐԹԹ, 8 ՅՈՒՆԻՈՒՄ
- Բ. խմբակ (Ռիօ Ժո ժանէյրօ)
- Մանչեսթըր Եունայթըտ (Անգլիա) - Վասքօ Տա Կամա (Պրազիլ) (ժամը 22։15ին)
- Սաութ Մելբուրն (Աւստրալիա) - Նեսաքսա (Մեքսիքա) (ժամը 0։45ին)

- ԵՐԿԵՎՇԱՐԹԻ, 10 ՅՈՒՆԻՈՒՄ
- Ա. խմբակ (Սան Փաուլօ)
- Ռեալ Մատրիտ (Սպանիա) - Ռաիա Քազալլանքա (Մարոք) (ժամը 22։45ին)
- Ալ Նասր (Սէուտական Արաբիա) - Քորինթիանս (Պրազիլ) (ժամը 1։15ին)

- ԵՐԵՔԸՇԱՐԹԻ, 11 ՅՈՒՆԻՈՒՄ
- Բ. խմբակ (Ռիօ տը ժանէյրօ)
- Մանչեսթըր Եունայթըտ (Անգլիա) - Սաութ Մելբուրն (Աւստրալիա) (ժամը 22։15ին)
- Նեսաքսա (Մեքսիքա) - Վասքօ Տա Կամա (Պրազիլ) (ժամը 0։45ին)

- ՌԵՐԵԱՐԹ, 14 ՅՈՒՆԻՈՒՄ
- 3րդ դիրքին համար մրցում
- Ա. խմբակից երկրորդը՝ Բ. խմբակից երկրորդին դէմ (Սան Փաուլօ, ժամը 21։00ին)
- Աւարտական մրցում
- Ա. խմբակից առաջինը՝ Բ. խմբակից առաջինին դէմ (Ռիօ տը ժանէյրօ, ժամը 0։00ին)

ازتكال: هـاتف: ٢٤١٢٧٤-٢٦.١١٥-٢٥٨٥٢٦
فاكس: ٢٥٨٥٢٩ ص.ب: ١٠٨٦٠ بروج حقدود